ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
BULLETIN OF THE ACADEMY OF SCIENCES OF THE ARMENIAN SSR

Բնական գիտություններ № 5—6, 1945 *Естественные науки*

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1945 թ. նոյեմբերի 20-ից մինչև 22-ը տեղի ունեցան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր Ժողովի հոբելյանական նիստերը՝ նվիրված Հայաստանում Սովետական Իշխանության հաստատման 25-րդ տարեդարձին։

Ընդհանուր Ժողովի նիստերում լսվեցին հետևյալ զեկուցումները.

1. Գիտության զարգացումը Սովետական Հայաստանում (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ, ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ Վ. Հ. Համբարձումյան)։

2. Հայասան որպես հայերի բնօրրան (հայերի ծագման հարցի շուրջը) (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ա. Ղափանցյան)։

3. Հին և նոր հայագիտությունը (ֆիլոլոգ. գիտ. դոկտոր Ա. Ս. Ղարիբյան)։

4. Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ, ակադեմիկոս Հ. Հ. Մանանդյան)։

5. Սովետական պատմավեպը (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Հ. Տերտերյան)։

6. Սովետական ֆիզիոլոգիայի հաջողությունները (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ, ակադեմիկոս Լ. Ա. Օրբելի)։

7. Քնի բուժիչ դերը (ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ Է. Հ. Հասրաթյան)։

8. Երկրաբանության հաջողությունները Սովետական Հայաստանում (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Կ. Ն. Պաֆենգոլց)։

9. Ֆիլոգենետիկ կառուցումների սկզբունքների և մեթոդների մասին (ՀՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Ա. Լ. Թախտաջյան)։

10. Ամիդները որպես դեղամիջոցների աղբյուր (քիմ. գիտութ. դոկտոր Ա. Լ. Մնջոյան)։

* * *

Նոյեմբերի 20-ին, Ընդհանուր Ժողովի կապակցությամբ, բացվեց ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հոբելյանական ցուցահանդեսը, որն արտացոլում էր գիտության բնագավառում ձեռք բերված հաջողությունները։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահությունը 1945 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում լսելով Ակադեմիայի Բիոլոգիական գիտությունների և Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքների զեկուցումները 1945 թ. գիտահետազոտական աշխատանքների արդյունքների և 1946 թ. հիմնական պրոբլեմների մասին, ընդունեց հետևյալ որոշումները.

I. Բիոլոգիական գիտությունների Բաժանմունքի գծով

1. Արձանագրել, որ Բիոլոգիական գիտությունների Բաժանմունքի հիմնարկները 1945 թ. ընթացքում ձեռք են բերել զգալի հաջողություններ, իրագործելով տեսական և ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող մի շարք աշխատանքներ։ Այս կարգի աշխատանքների շարքը կարելի է դասել հիբրիդիզացիայի բնագավառում Բուսերի Գենետիկայի Ինստիտուտի կատարած աշխատանքները, որոնց հետևանքով ստացված են գյուղատնտեսական կուլտուրաների նոր արժեքավոր ձևեր, Բուսաբանական Ինստիտուտում կատարվող պալեոբոտանիկական և արխեոբոտանիկական հետազոտությունները, Հայկական

ՍՍՌ-ի ֆաունայի և ֆլորայի քննական վերանայման ուղղությամբ կենդանաբանական և բուսաբանական ինստիտուտների ձեռնարկած աշխատանքները, Ֆիզիոլոգիայի Ինստիտուտի և Բուսաբանական այգու աշխատանքները մի շարք ալկոհոլատու բույսեր երևան բերելու, նրանց ֆարմակոլոգիական անալիզը տալու ուղղությամբ և Միկրոբիոլոգիայի սեկտորի աշխատանքները գյուղատնտեսական կուլտուրաների բակտերիոզների գծով։

2. Հիմնականում հաստատել Բիոլոգիական գիտությունների Բաժանմունքի հիմնարկների 1946 թ. աշխատանքների պլանը և հանձնարարել Բաժանմունքին՝ վերանայելով թեմատիկ պլանը կարևորագույն պրոբլեմների շուրջը առավելագույն չափով համակենտրոնացնելու հիման վրա և լրացուցիչ կարգով առաջադրված թեմաները մտցնելով նրա մեջ, վերջնականապես հաստատել այն։

3. Հանձնարարել Բաժանմունքին՝ 1946 թվականի ընթացքում գումարել Բաժանմունքի մի շարք գիտական խորհրդակցություններ՝ հեռանկարային պլան մշակելու, ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բիոլոգիական հիմնարկների հիմնական խնդիրներն ու պրոֆիլը հշգրտելու համար, իսկ աշխատանքների կոորդինացման նպատակով խորհրդակցությունների աշխատանքներին մասնակից դարձնել Միութենական և ռեսպուբլիկական Ակադեմիաների համապատասխան մասնագետներին։

4. Հանձնարարել Բաժանմունքին՝ մշակել Սևանա լճի բիոլոգիական հետազոտությունների համահավաք պլանը՝ Գիտությունների Ակադեմիայի կողմից Սևանա լճում վերջինիս մակերևույթը իջեցնելու առնչությամբ կատարվելիք գիտա-հետազոտական աշխատանքների ընդհանուր պլանի մեջ մտցնելու համար։

5. Հանձնարարել Բաժանմունքին՝ Գիտությունների Ակադեմիայի Նախագահությանը ներկայացնել այն գիտական պրոբլեմների և գիտա-կազմակերպական հարցերի ցանկը, որոնք, աշխատանքների կոորդինացման նպատակով, կարող են միջբաժանմունքային քննարկման։

6. Հանձնարարել Բաժանմունքին՝ մեկ ամսվա ընթացքում Գիտությունների Ակադեմիայի Նախագահությանը ներկայացնել Բաժանմունքի հիմնարկների լաբորատորիական և նյութա-տեխնիկական բազա ստեղծելու և վերջինիս մակարդակը բարձրացնելու համար կոնկրետ միջոցառումների պլանը, նշելով նրանց հերթականությունը, մասնավորապես հաշվի առնելով բույսերի ֆիզիոլոգիայի, հելմինտոլոգիայի և այլ լաբորատորիաների աշխատանքն ապահովելու անհրաժեշտությունը։

7. Խնդրել ՀՍՍՌ Ժողկոմսովետին՝ ֆիզիոլոգիական և էկոլոգիական աշխատանքների համար բազա ստեղծելու նպատակով 2—3 հեկտար հողամաս հատկացնել Բուսաբանական Ինստիտուտին այն տերիտորիայում, որ հարում է ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Երկրագործության Ինստիտուտի էքսպերիմենտալ բազային։

8. Հանձնարարել Բաժանմունքին՝ ինստիտուտների հայերի հիման վրա պատրաստել իմպորտային և հայրենական այն սաղբավորման ընդհանուր ցանկը, որ անհրաժեշտ է Բաժանմունքի հիմնարկների էքսպերիմենտալ հետազոտությունների ծավալման համար։

9. Հանձնարարել Բաժանմունքին՝ 1946 թվականի համար կազմել այն գիտական գործուղումների պլանը, որ տրվելու են գիտական աշխատողներին ու ասպիրանտներին՝ Մոսկվայի, Լենինգրադի և այլ քաղաքների գիտա-հետազոտական ինստիտուտներում նյութեր մշակելու, հետազոտությունների նոր մեթոդներին ծանոթանալու և նրանց գիտական որակավորումը բարձրացնելու նպատակով։

II. Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի գծով

1. Արձանագրել, որ Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի հիմնարկները 1945 թ. ընթացքում ձեռք են բերել զգալի հաջողություններ, իրագործելով տեսական և ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող մի շարք աշխատաններ։ Այս կարգի աշխատանքների շարքը կարելի է դասել կուլտուրական բույսերի ձեռաջացման նոր տեսության մշակումը Երկրագործության Ինստիտուտում (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Մ. Թումանյան) և այդ տեսության հիման վրա գյուղատնտեսական կուլտուրաների նոր արժեքավոր ձևեր ստանալու հետ կապված, ընթացիկ տարում շարունակվող աշխատանքները, Հայաստանի անասնապահության պատմության և ուղիների ուսումնասիրման բնագավառում Անասնապահության Ինստիտուտի աշխատանքը (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Թամամշև), Գինեգործության և խաղողաբուծության Ինստիտուտի աշխատանքը Հայաստանի ամպելո-

գրաֆիան կազմելու ուղղությամբ (ավ. գիտ. աշխ. Գ. Գրձելյան, Մ. Մալխասյան և ուրիշները), Հայաստանի հողածածկի ուսումնասիրման ուղղությամբ Հողագիտության սեկտորի կատարած աշխատանքը (դյուղատնտ. գիտ. թեկնածու Ա. Զիթչյան) և Էկոնոմիկայի սեկտորի աշխատանքը ՀՍՍՌ-ի տնտեսական քարտեզը կազմելու ուղղությամբ (տնտեսագիտական գիտ. թեկն. Ս. Խրիմլյան)։

2. Հիմնականում հաստատել Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի ինստիտուտների և սեկտորների 1946 թ. աշխատանքների պլանը։ Հանձնարարել Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքին՝ մի անգամ ևս մանրամասնորեն վերանայել և վերջնականապես հաստատել պլանները, ձգտելով ամբողջ թեմատիկան կենտրոնացնել գյուղատնտեսության հանդուցային, առաջատար պրոբլեմների շուրջը։

3. Հանձնարարել Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքին՝ հատուկ ուշադրություն դարձնել, որպեսզի արտադրության մեջ մտցվեն այն աշխատանքները, որոնք ունեն ակտուալ գործնական նշանակություն և անհրաժեշտ են Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության համար։

4. Հանձնարարել Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքին՝ 1946 թ. ընթացքում հատուկ խորհրդակցություններում քննարկել և հստակ իր առանձին հիմնարկների պրոֆիլը և հիմնական խնդիրները։

5. Հանձնարարել Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքին՝ մեկ ամսվա ընթացքում Գիտությունների Ակադեմիայի Նախագահությանը ներկայացնել հետազոտական աշխատանքների լաբորատորական ու նյութա-տեխնիկական բազա ստեղծելու և բարելավելու համար անհրաժեշտ միջոցառումների պլան—մասնավորապես հատուկ լաբորատորիաների ու նրանց սարքավորման, հենակետերի, ջերմատների, բանվորական և օժանդակ շենքերի, գրադարանների, փոխադրական միջոցների, գյուղատնտեսական մեքենաների, քարշող ուժի, փորձարկման կենդանիների և այլն—փորձնական և էքսպեդիցիոն աշխատանքներն ապահովելու համար։

6. Հանձնարարել Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքին՝ կազմել այն գիտական գործուղումների պլանը, որ տրվելու են իր հիմնարկների գիտական անձնակազմին և ասպիրանտներին՝ Մոսկվայի, Լենինգրադի և Միության այլ կենտրոնների գիտահետազոտական հիմնարկներում որակավորումը բարձրացնելու, գյուղատնտեսական գիտության նոր նվաճումներին ծանոթանալու և փորձի փոխանակման համար։

7. Հանձնարարել Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքին՝ Գինեգործության և խաղողաբուծության Ինստիտուտի հետ միասին հոգ տանել և կոնկրետ միջոցներ ձեռք առնել այդ Ինստիտուտի կադրերը գինեգործության բնագավառում ուժեղացնելու համար։